

021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն

021801.06.6 Սցենարադրամատուրգիական արվեստ բակալավրի մասնագիտական կրթական ծրագրով ԵԹԿՊԻ-ի դիմորդը հանձնում է երեք քննություն.

1. Ստեղծագործական շարադրություն
2. Հարցազրույց
3. Հայոց լեզու, գրականություն (մրցութային)

Դիմորդը փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնի որևէ գրական ստեղծագործություն (պատմվածք, նովել, գրական էտյուդ, էսսե):

Ստեղծագործական շարադրություն քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ ստեղծագործական ունակությունների բացահայտում, գրական և գեղարվեստական հայացքների գեղագիտական չափանիշների ընտրություն, իրական փաստերի և երևույթների իմացություն, ներկայացում և բնութագրում, դրանց վերլուծության և գեղագիտական ընդհանրացման ունակություն, ընտրած մասնագիտության հանդեպ հետաքրքրության դրսևորում՝ 0-10 միավոր,
- ✓ ինքնուրույն մտածողություն և ստեղծագործական երևակայություն՝ 0-5 միավոր,
- ✓ գրագետ շարադրանք՝ քերականորեն և տրամաբանորեն ճիշտ շարադրելու կարողություն՝ 0-5 միավոր:

Թեմաներն ընտրվում են նախօրոք հանձնարարված գրականության և ազատ թեմաների շրջանակներում: Շարադրության ծավալը տեսրի 5 էջ է՝ գրված կանոնավոր ձեռագրով:

Հարցազրույց քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ գրական երկի իմացություն և վերլուծություն՝ 0-7 միավոր,
- ✓ դրամատուրգիական երկի կամ ֆիլմի իմացություն և վերլուծություն՝ 0-7 միավոր,
- ✓ դիմորդի կողմից ներկայացված գրական ստեղծագործության քննարկում՝ 0-6 միավոր:

Քննությունն ընթանում է նախապես հայտարարված թեմաների շրջանակում՝ հարցատոմսերով:

«Հայոց լեզու, գրականություն» քննության գնահատականը մրցութային միավոր է:

**021801.06.6 Սցենարադրամատուրգիական արվեստ ՄԿԾ-ի
2018թ. ընդունելության ծրագիր**

| ՀԵՂԻՆԱԿՆԵՐ | | |
|---|-------------------|--------------------|
| 📖 Մովսես Խորենացի | 📖 Եղիշե Չարենց | 📖 Ակսել Բակունց |
| 📖 Գրիգոր Նարեկացի | 📖 Վահան Թորոպենց | 📖 Ստեփան Զորյան |
| 📖 Խաչատուր Աբովյան | 📖 Պարույր Սևակ | 📖 Պերճ Զեյթունցյան |
| 📖 Նար-Դոս | 📖 Համո Սահյան | 📖 Նորայր Ադալյան |
| 📖 Րաֆֆի | 📖 Հրանտ Մաթևոսյան | 📖 Վահագն Գրիգորյան |
| 📖 Հովհաննես Թումանյան | 📖 Աղասի Այվազյան | 📖 Ռազմիկ Դավոյան |
| ստեղծագործությունների ընտրությունը դիմորդի հայեցողությամբ | | |

Պիեսներ

- 📖 Վ.Շեքսպիր «Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», «Ռոմեո և Ջուլիետ»
- 📖 Ժ.-Բ. Մոլիեր «Դոն Ժուան»
- 📖 Հ.Իբսեն «Ժողովրդի թշնամի» («Դոկտոր Ստոքման»), «Տիկնիկների տունը» («Նորա»)
- 📖 Բ.Բրեխտ «Կուրաժ մայրիկն ու նրա երեխաները»
- 📖 Վ.Սարոյան «Իմ սիրտը լեռներում է»
- 📖 Մ.Լերմոնտով «Դիմակահանդես»
- 📖 Ա.Գրիբոյեդով «Խելքից պատուհաս»
- 📖 Ն.Գոգոլ «Ռևիզոր»
- 📖 Ա.Չեխով «Բալենու այգի»
- 📖 Գ.Սունդուկյան «Պեպո»
- 📖 Հ.Պարոնյան «Պաղտասար աղբար»
- 📖 Ալ.Շիրվանզադե «Պատվի համար»
- 📖 Լ.Շանթ «Հին աստվածներ»
- 📖 Դ.Դեմիրճյան «Քաջ Նազար»

Ֆիլմեր

- ⊕ Հ.Բեկնազարյան «Նամուս», «Պեպո»
- ⊕ Ֆ.Դովլաթյան «Բարև, ես եմ», «Սարոյան եղբայրներ», «Կարոտ»
- ⊕ Հ.Մալյան «Եռանկյունի, «Նահապետ»
- ⊕ Ա.Փելեշյան «Մենք», «Տարվա եղանակներ», «Վերջ», «Սկիզբ»
- ⊕ Մ.Փարաջանով «Նռան գույնը»
- ⊕ Ֆ. Ֆելինի «Ամարկորդ»
- ⊕ Ս. Էյզենշտեյն «Պոտյոմկին» գրահանավը»
- ⊕ Չ.Չապլին «Մեծ քաղաքի լույսերը», «Փոքրիկը»

Այլ թեմաներ

- ✓ Կինոյի ստեղծումը, հայկական կինոյի ստեղծումը
- ✓ Հայ կոմպոզիտորներ. Կոմիտաս, Ա.Սպենդիարյան, Ա.Խաչատրյան, Ա.Բաբաջանյան
- ✓ Հայ նկարիչներ. Հովհ.Այվազովսկի, Մ.Սարյան, Մ.Ավետիսյան, Վ.Սուրենյանց
- ✓ Վերածննդի դարաշրջանի նկարիչներ. Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո
- ✓ Երևան քաղաքի մշակութային օջախները, հուշարձանները

Առաջարկվող գրականության ցանկ

- ✓ Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան, Ե., 2011:
- ✓ Հայկական Սովետական Հանրագիտարան, 13 հատորով, Ե., 1974-1987:
- ✓ Հանդիպումներ 10-րդ մուսայի հետ, Ե., 1985:
- ✓ Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Ե., 1961:
- ✓ Տարբեր տարիներին հրատարակված ալբոմներ և ժողովածուներ՝ նվիրված արվեստի և գրականության ականավոր գործիչներին:
- ✓ Садуль Ж. История киноискусства, М., 1957.